ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2024թ. հոկտեմբերի 3-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 23-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայցորդի ատեստավորում
2. ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհի ամփոփիչ հաշվետվության ընդունում
3. Լավագույն ուսանող մրցույթին մասնակցության երաշխավորության մասին
4. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի ատեստավորման մասին հարցը:

1. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդի ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի երկրորդ տարվա հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» թեմայով (ղեկավար տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Առաքելյան) ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխների վերաբերյալ կատարվել է գրականության ուսումնասիրում և նյութերի հավաքագրում: Մասնակցել է օտար լեզվի դասընթացին և հավաքել համապատասխան կրեդիտները: Որպես պրակտիկա «Արմիոլդինգ» ՓԲԸ-ում զբաղվել է ֆինանսական և գործառնական կառավարմամբ: Տպագրվել է 2 հոդված, ևս 1-ը գտնվում է տպագրման փուլում:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Հարցադրումներն առնչվում էին գրականության ուսումնասիրման և նյութերի հավաքագրման աշխատանքներին, նաև գիտական հանդեսներին, որտեղ տպագրվել են հայցորդի հոդվածները:

3. Հայցորդ Ռ.Մաշուրյանը հարցադրումներին հակիրճ պատասխանելով նշեց, որ գրականության ուսումնասիրման և նյութերի հավաքագրման աշխատանքների մասով վերլուծությունը շարունակվում է, իսկ հոդվածները տպագրվել են միջազգային գիտաժողովների մասնակցության հիման վրա:

4. Տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեցին, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդը հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել է պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման 01.10.2024թ. թիվ 3 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում Ռաֆիկ Մաշուրյանի կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 2-րդ տարվա հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանն ատեստավորվեց՝ միաձայն քվեարկությամբ:

2. ԼՍԵՑԻՆ. 21T-5B193 ծածկագրով «Բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման խնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում» գիտական թեմայի (գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյան) 2023-24թթ. հաշվետվության մասին հարցը:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Գիտական թեմայի ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ զեկուցմամբ: Տարեկան հաշվետվությամբ ներկայացրեց կատարված ուսումնասիրությունները՝ ըստ 2023-2024թթ. նախատեսված ժամանակացույցի: Նշեց, որ ՀՀ պետական և մասնավոր կազմակերպությունների փորձառության և գործելակերպի ուսումնասիրության հիման վրա կատարված հետազոտությունների արդյունքներն ամփոփվել են Scopus ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականում և կոլեկտիվ մենագրությունում: Հավելեց, որ 2021-2024թթ. գիտական թեմայի շրջանակում կատարված աշխատանքների հիման վրա հրատարակվել է 6 գիտական հոդված՝ որից 2-ը Scopus-ում, մնացած 4 հոդվածներից 1 հրատարկվել է Իտալիայում: Ամփոփելով ընդգծեց, որ գիտական թեմայի շրջանակում աշխատանքները կատարվել են ըստ ժամանակացույցի՝ ներկայացված օրացույցային պլանի համաձայն և առաջարկեց գնահատել կատարված աշխատանքը:

2. Հարց հնչեցրեց տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը:

Հարցադրումն առնչվում էր, թե որքանով են դրամաշնորհի հետազոտությունների արդյունքները ներառվել որպես պատվիրատու ՀՀ ԿԳՄՄՆ փաստաթղթերի մշակումներում:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նախ հակիրճ պատասխանեց հարցադրմանը՝ նշելով, որ պահանջվող կարգի համաձայն տարեկան հաշվետվությունները միշտ ուղարկվել են ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, սակայն հստակ առաջարկությամբ հանդես չեն եկել, հետո առաջարկեց գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատել քվեարկությամբ:

2. ՈՐՈՇԵՑԻՆ. Հավանություն տալ «Բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման խնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի կատարման արդյունքներին և գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

Գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատվեցին դրական՝ միաձայն քվեարկությամբ:

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի «Ֆինանսներ» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանող Վահե Զավենի Ասատրյանի մասնակցությունը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին երաշխավորելու հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը նշեցին, որ Վահե Ասատրյանը ուսումնառության ընթացքում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, վերլուծական կարողություններ, ակտիվորեն մասնակցել է ֆակուլտետի գիտական միջոցառումներին, կոնֆերանսներին: Հավելեցին նաև, որ Վ.Ասատրյանը հաղթել է «ԵՊՀ լավագույն ուսանող-2024» մրցույթում:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Վ.Ասատրյանի մասնակցությունը մրցույթին երաշխավորելու հարցը դնել քվեարկության:

3. ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի «Ֆինանսներ» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանող Վահե Զավենի Ասատրյանին երաշխավորել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցելու համար:

«Լավագույն ուսանող» մրցույթին Վահե Ասատրյանի մասնակցության երաշխավորությունն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ հարցը:

4.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ. Գ.Սահակյանը նշեց, որ ֆակուլտետի լսարանները խելացի գրատախտակներով կահավորելը տեխնիկապես մեծ հնարվորություններ է ստեղծել դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացման տեսանկյունից, սակայն խնդիրներ են առաջացել լսարանում առողջության պահպանման տեսանկյունից՝ կապված գրատախտակի և նստարանների օպտիմալ հեռավորության հետ: Առաջարկեց խնդրի լուծման տարբերակներ գտնել:

2. Տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը բարձրաձայնեց խնդիրներ, որոնք առնչվում էին շենքում գործող բուֆետի աշխատանքներին և առաջարկեց խնդրի լուծման տարբերակներ գտնել:

3. Տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը բարձրաձայնեց խնդիրներ, որոնք առնչվում էին լսարանների մուտքին և ելքին՝ շեշտադրելով անհրաժեշտության դեպքում տարհանման հնարավոր անհարմարությունները և առաջարկեց խնդրի լուծման տարբերակներ գտնել:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ համակարծիք է բարձրացված խնդիրների հետ: Ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման նպատակով առաջարկեց նախ ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝ տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյան, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյան, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյան, հանձնարարեց աշխատանքային խմբին ուսումնասիրել և վերհանել ֆակուլտետի ենթակառուցվածքներին առնչվող և հրատապ լուծում պահանջող խնդիրները, հետո քննարկվող հարցը դրեց քվեարկության:

4.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու առաջարկը և խմբին տրված դեկանի հանձնարարականը:

Ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման նպատակով աշխատանքային խմբի ձևավորման և առաջիկա հանձնարարության կատարման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ***Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ***Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ***